ՀԱԿԱՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Մ. Վ.

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (այսուհետև՝ Օրենք) «… հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված այն պայմանագրերը, համաձայնությունները կամ նրանց համաձայնեցված գործողությունները (այսուհետև՝ համաձայնություններ – Մ. Մ.), որոնք կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը» (հոդվ. 5)։ Օրենքը փաստորեն առանձնացնում է հակամրցակցային համաձայնությունների երկու տեսակ՝ պայմանագրերի և համաձայնագրերի տեսքով և համաձայնեցված գործողությունների տեսքով։

Պայմանագրերի և համաձայնագրերի տեսքով գրավոր համաձայնություններն ընդունված է համարել բացահայտ համաձայնություններ, քանի որ գրավոր վավերագրեր են պարունակում։ Համաձայնեցված գործողությունները գրավոր վավերագրեր չեն պարունակում, սակայն դրանք ևս կարող են հակամրցակցային դրույթներ պարունակել։ Տնտեսվարող սուբյեկտների նման գործողություններ դրսևորվել են նաև կապիտալիզմի զարգացման սկզբնական փուլում։ Ադամ Սմիթը այդ մասին գրել է դեռևս 1776 թ.[1]։ Սմիթյան ավելի քան երկդարյա հնության դատողությունները իրենց նշանակությունը չեն կորցրել նաև մեր օրերում։ Դեռ ավելին, բացահայտ հակամրցակցային համաձայնությունները ներկայումս հազվադեպ են հանդիպում։ Դրանք հիմնականում գաղտնի բնույթ են կրում։

Գաղտնի համաձայնության մասնակիցները, առանձին վերցրած, կարող են շուկայի վրա ազդելու հնարավորություն չունենալ։ Սակայն այդպիսի համաձայնության հետևանքով դրանց մասնակիցները շուկայական համատեղ մեծ իշխանություն են ձեռք բերում։ Չեն հանդիպում էական մրցակցության և կարող են կամ ժամանակավորապես վնաս կրելու հաշվին շուկայից դուրս մղել համաձայնության ոչ մասնակից մանր տնտեսվարող սուբյեկտներին կամ, գները բարձրացնելով, անմիջապես ազդել սպառողների վրա, գերշահույթներ ստանալ։ Մրցակցության սահմանափակում տեղի կունենա թե ապրանքը առանց շահույթի վաճառելու և թե գների բարձրացման հետևանքով։ Առաջին դեպքում՝ շուկայից

[1] **Смит Адам**, *Исследование о природе и причинах богатства народов, М., 1962.*

մրցակիցների դուրս մղման, երկրորդ դեպքում՝ մրցակցության թուլացման ճանապարհով (գների բարձրացման ուղիով գերշահույթի ստացման հնարավորությունը մրցակիցներին չի հարկադրի մտածել ծախսերի կրճատման մասին): Այդ է պատճառը, որ գաղտնի համաձայնությունները թաքնված բնույթ են կրում: Դրանք հատկապես մեծ տարածում են գտել զարգացած երկրներում: Այսպես, Ճապոնիայի սինթետիկ ներկերի շուկայում ,,Միցուբիշի,, հոլդինգի «Միցուբիշի կասեյ» ձեռնարկությունը ունեցել է ընդամենը 13 % բաժին: Առանձին վերցրած՝ այն շուկայի վրա ազդել չէր կարող: Սակայն, 1972 թ. մարտի 1-ին ներկերի գների բարձրացման մասին հայտարարեց «Սումիտոմո կագակու» քիմիական խոշոր ընկերությունը, մարտի 6-ին՝ «Նիպպոն կայակուն», մարտի 10-ին՝ «Միցուբիշի կասեյը», իսկ մի քանի օր անց՝ մնացած ընկերությունները[2]: Հետագայում, ինչպես պարզվեց, գների բարձրացումը շուկայի մասնակիցների համաձայնեցված գործողության արդյունք էր: Սինթետիկ ներկերի դեպքը հակամրցակցային համաձայնության բազմաթիվ դեպքերից մեկն է: Միայն 1973թ. փետրվարից մինչև 1974թ. ապրիլ ամիսը Ճապոնիայում բացահայտվել են տարբեր ճյուղերի 63 կարտելներ[3]:

Առհասարակ, հակամրցակցային համաձայնությունների բացահայտումն առավել դժվար ապացուցվող գործողություններից է: Չնայած հակամենաշնորհային մարմինները, որպես կանոն, մեծ իրավունքներով են օժտված[4], բայց գաղտնի համաձայնությունների ապացուցման ժամանակ շատ դժվարությունների են հանդիպում:

Հակամրցակցային համաձայնությունների բացահայտումը կըրկնակի դժվար կլինի Հայաստանում: Այդպիսի իրավասությամբ օժտված պետական մարմինը (հանձնաժողովը) ոչ միայն խուզարկելու, այլև ստուգելու իրավասությամբ օժտված չէ: Դեռ ավելին, եթե հանձնաժողովը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից կարող է փաստաթղթեր և այլ տեղեկատվություն պահանջել, ապա տնտեսվարող սուբյեկտները հանձնաժողովին իրենց հարցի քննարկման կապակցությամբ, օրենքի համաձայն, միայն □անհրաժեշտ տեղեկություն են ներկայացնում□ (հոդվ. 28): Հետևաբար, հանձնաժողովի համար ոչ միայն ոչ բացահայտ (թաքնված) հակամրցակցային համաձայնությունները դժվար կլինի ապացուցել, այլև բացահայտ

---

[2] **Бандура Ю.,** *Империя трех бриллиантов, М., 1976, с. 32.*

[3] Նույն տեղում:

[4] ԱՄՆ-ում, դատարանի որոշմամբ, հակատրեստային մարմինները (Առևտրի ֆեդերալ հանձնաժողովը և Արդարադատության նախարարության հակատրեստային դեպարտամենտը) իրավունք ունեն ստանալ ցանկացած տեղեկատվություն կամ փաստաթուղթ: Եվրոմիության երկրներն իրավունք ունեն խուզարկություններ կատարել և վաղ առավոտյան «հարձակման» միջոցով փաստաթղթեր ու այլ իրեղեն ապացույցներ առգրավել: ԱՊՀ երկրներում հակամենաշնորհային մարմինները ստուգելու իրավասություն ունեն: Ուկրաինայի մրցակցային նոր օրենսդրությամբ, պետական մարմնին վերապահված է նաև խուզարկություն կատարելու և իրեղեն ապացույցներ առգրավելու իրավասություն *(Закон Украины о защите экономической конкуренции от 11.I. 2001, N 2210-III):*

համաձայնությունները: Այդ պատճառով անհրաժեշտ է օրենքում փոփոխություն կատարել՝ հանձնաժողովին տնտեսվարող սուբյեկտներից փաստաթղթեր պահանջելու և խուզարկում կամ ստուգում կատարելու իրավասությամբ օժտել: Միաժամանակ, թաքնված համաձայնությունների բացահայտման հիմք պետք է ընդունել վերլուծության արդյունքը, որի մեխանիզմին կանդրադառնանք ստորև:

Հակամրցակցային համաձայնություններ կկայացվեն ինչպես միևնույն ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների (հորիզոնական), այնպես էլ տարբեր շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների միջև (ուղղահայաց, օրինակ, ալյուր վաճառողի և հացարտադրությամբ զբաղվողների): Կարող են դրսևորվել նաև խառը (կոնգլոմերատ) տեսակի հակամրցակցային համաձայնություններ (միաժամանակ և ուղղահայաց և հորիզոնական՝ ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների միջև):

Թաքնվածհակամրցակցային համաձայնությունները բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել մի շարք բնութագրական ցուցանիշներ: ***Նախ,*** համաձայնության մասնակիցները պետք է որոշակի շուկայական իշխանությամբ օժտված լինեն: ՀՀ օրենքով այդպիսի շուկայական իշխանությամբ օժտված լինելու սահմանագիծը տվյալ ապրանքային շուկայում համատեղ առնվազն 20 % բաժին ունենալն է (օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում և Ղազախստանում 35 %- ն է): ***Երկրորդ,*** հակամրցակցային համաձայնության առարկան պետք է առկա լինի: ՀՀ օրենսդրությամբ այդպիսի առարկաներ կարող են լինել. ա) խտրական գների սահմանումը, բ) ապրանքային շուկայում գների արհեստական բարձրացումը, իջեցումը կամ պահպանումը, գ) շուկայի բաժանումը տարածքային սկզբունքով՝ ըստ իրացման կամ ձեռքբերման ծավալի, ապրանքի տեսականու, սպառողների կամ մատակարարների խմբերի և այլն, դ) այլ տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելուն խոչընդոտելը (սահմանափակելը) կամ շուկայից նրանց դուրս մղելը: ***Երրորդ,*** հակամրցակցային համաձայնության առարկայի դրսևորումը ակնթարթային կամ կարճատև ժամանակահատվածում: Որպես կանոն, համաձայնության մասնակիցների համար համաձայնության առարկայի կիրառումն իմաստ կունենա, եթե այն ակնթարթային (միաժամանակյա) կամ կարճատև ժամանակահատվածի ընթացքում է կատարվում (մինչև 1 ամսվա ընթացքում): ***Չորրորդ,*** հակամրցակցային համաձայնության արդյունքի դրսևորման հետևանքով կարող է մրցակցությունը սահմանափակվել, կանխվել, արգելվել: Մրցակցության սահմանափակում, կանխում, արգելում տեղի կունենա, եթե առկա լինի ներքոհիշյալ ցուցանիշներից որևէ մեկը. ա) որոշակի ապրանքային շուկայում զգալիորեն (ավելի քան 5%) նվազի ֆիրմաների թվաքանակը և (կամ) ավելանա համաձայնության մասնակից տնտեսվարող սուբյեկտների բաժինը, բ) համաձայնության մասնակիցները այլ հավասար պայմաններում իրացման գնի բարձրացման կամ ձեռքբերման գնի իջեցման հետևանքով լրացուցիչ շահույթներ ստանան, գ) համաձայնության մասնակիցները այլ հավասար պայմաններում վնասով կամ առանց շահույթի գործեն, դ) միևնույն ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ խտրական պայմաններ (այդ

թվում՝ գների) կիրառելը, ե) միևնույն ապրանքային շուկայում համաձայնության (հորիզոնական) մասնակիցներից յուրաքանչյուրը. ա) իր ապրանքն իրացնի նախապես որոշված տարածքում միանձնյա կամ համաձայնության մասնակից որևէ տնտեսվարող սուբյեկտի հետ, բ) որոշակի ժամանակահատվածում միևնույն շուկայում առկա փոխադարձ փոխարինելի ապրանքներից միտումնավոր իրացնի ոչ բոլորը, գ) ապրանքների արհեստական պակասորդ ստեղծի, դ) առաջարկի (պահանջարկի) առկայության դեպքում չհիմնավորված կերպով ապրանքը վաճառի (գնի) ոչ բոլոր սպառողներին (մատակարարներից), ե) վաճառողներին (գնորդներին) տվյալ ապրանքի գնման (վաճառքի) հետ չառնչվող լրացուցիչ պայմաններ թելադրի, զ) դուրս գա շուկայից հօգուտ համաձայնության մասնակից մյուս տնտեսվարող սուբյեկտի (սուբյեկտների):

Շուկայի կայունությունը դրա մասնակից տնտեսվարող սուբյեկտների, դրանց բաժինների, շուկայի ծավալի անփոփոխ կամ աննշան փոփոխված լինելն է: Շուկայի մասնակիցների թվի պակասումը կամ դրանց մի մասի (որպես կանոն, շուկայական իշխանությամբ օժտված սուբյեկտների) բաժնի զգալի ավելացումը ի հաշիվ մյուսների նշանակում է մրցակցության ուղղակի սահմանափակում:

Մնացած ցուցանիշները ևս մրցակցության սահմանափակման, կանխման կամ արգելման բնութագրական ցուցանիշներ են:

Ի դեպ, Ղազախստանի Հանրապետության օրենսդրությամբ[5], մրցակցության սահմանափակում են դիտվում. ա) համաձայնության մասնակից շուկայի սուբյեկտների տնտեսագիտական անկախ որոշումներ կայացնելու սահմանափակումը, բ) համապատասխան ապրանքային շուկայում ապրանքների պահանջարկի և առաջարկի վրա ազդեցությունը:

Նման սահմանման դեպքում շուկայի մասնակից սուբյեկտի ցանկացած վերակազմակերպում մրցակցության սահմանափակում կդիտվի: Մինչդեռ, ոչ բոլոր վերակազմակերպումներն են, որ կհանգեցնեն մրցակցության սահմանափակման:

Այսպիսով, թաքնված հակամրցակցային համաձայնությունները բացահայտելու համար պարզվում է համաձայնության մասնակիցների շրջանակը, և եթե դրանց համատեղ բաժինը մեծ է 20 %-ից, պարզվում է համաձայնության առարկա՝ վերոհիշյալ դրույթներից որևէ մեկի առկայությունը: Այնուհետև, ստուգվում է, թե ինչ ժամանակահատվածում է մասնակիցների կողմից կիրառվել համաձայնության առարկան: Եթե, պարզվում է, որ համաձայնության մասնակիցները միաժամանակ կամ կարճատև ժամանակահատվածում են (մինչև մեկ ամիս) կիրառել հակամրցակցային համաձայնության առարկաներից որևէ մեկը, ապա դրանք համադրվում են նաև մրցակցության սահմանափակման

[5]Ղազախստանն առաջինն էր, որ փորձեց հակամրցակցային համաձայնությունը բացահայտել ոչ միայն իրեղեն ապացույցների (գրավոր) հայտնաբերման, այլև վերլուծության միջոցով՝ համաձայնության առարկա դրույթները համադրելով մրցակցության սահմանափակման դրույթներին (տե՛ս *Инструкция по выявлению соглашений (согласованных действий) субъектов рынка, ограничивающих конкуренцию 06.02.2003г. N 34-ОД):*

ցուցանիշների հետ: Դրանցից որևէ մեկի առկայությունը կվկայի հակամրցակցային համաձայնության մասին:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ВЫЯВЛЕНИЯ АНТИКОНКУРЕНТНЫХ СОГЛАШЕНИЙ

МИКАЕЛЯН М. В.

Резюме

Одной из проблем государственного регулирования рынка является выявление сговоров между хозяйствующими субъектами. Хозяйствующие субъекты, входящие в сговор, действуют, как единая доминирующая (монопольная) фирма, применяющая антиконкурентные действия по отношению к другим хозяйствующим субъектам и ущемляющая интересы потребителей. Сговор в основном носит тайный характер, тем самым усложняется его выявление.

Выявление сговора особенно сложно в Армении, где государственный орган, предназначенный для защиты конкуренции в республике, не имеет полномочий не только для обыска, но даже проверки достоверности представленной хозяйствующими субьектами информации.

Нами предлагается выявление сговора путем экономического анализа. С этой цель ю определяется совокупная доля хозяйствующих субъектов, участвующих в сговоре. Если она составляет более 20 процентов, то выявляется предмет антиконкурентных действий, соответствующих пятой статье Закона РА „О защите экономической конкуренции”. Затем выясняется промежуток времени проявлений предмета сговора.

Полученный результат соизмеряется с группой показателей ограничения конкуренции. Наличие хотя бы одного из показателей данной группы говорит о сговоре между хозяйству ющими субъектами.